

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ

1. Անհրաժեշտությունը

Սույն օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքի (ցեմենտ) ներքին շուկայի և տեղական արտադրությունը պաշտպանելու, ինչպես նաև ներմուծվող ու տեղում արտադրվող ապրանքների համար հավասար մրցակցության դաշտ ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հաշվի առնելով, որ վերջին տարիներին ցածր գներով ներմուծվող իրանական ցեմենտը կարող էր հանգեցնել Հայաստանի ցեմենտ արտադրող ընկերությունների գործունեության խաթարմանը՝ ՀՀ կառավարությամբ նախաձեռնությամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2019 թվականին տրվեցին օրենսդրական կարգավորումներ, որոնք նպատակ ունեին տեղական շուկայում ստեղծել հավասար պայմաններ ներմուծվող և տեղում արտադրվող ցեմենտի համար:

Հայաստանի ցեմենտ արտադրող ընկերությունների արտադրական հզորությունները թույլ են տալիս արտադրելու մոտ 2.1-2.2 մլն տոննա ցեմենտ, որն ամբողջությամբ կբավարարի ցեմենտի տեղական պահանջարկը:

Հիմք ընդունելով վերը նշված փաստարկները՝ 2019 թվականի հունիսին «Պետական տուրքի մասին» օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասի 15-րդ ենթակետով՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ծածկագրերի) «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման յուրաքանչյուր տոննայի համար սահմանվեց պետական տուրք՝ բազային տուրքի 14-ապատիկի չափով (03.06.2019թ. N ՀՕ-59, գործողության ժամկետը սահմանվեց մինչև 01.04.2020թ. իսկ հետագայում այն երկարաձգվեց մինչև 31.12.2020թ.):

Հաշվի առնելով, որ նշված դրույթն ուժը կորցրել է 2021թ. հունվարի 1-ից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն ուսումնասիրել է օրենսդրական կարգավորումների արդյունում

ցեմենտի տեղական շուկայում տեղի ունեցող գործընթացները: Ուսումնասիրությունների համար հիմք են հանդիսացել 2018-2020թթ. Հայաստան ներմուծված, ինչպես նաև Հայաստանում արտադրված և իրացված ցեմենտի ցուցանիշները:

Պետության կողմից ներմուծվող ցեմենտի համար պետ.տուրքի չափը հաշվարկվել էր այնպես, որ մի կողմից ապահովեր տեղական արտադրողների համար հավասար մրցակցային դաշտ, մյուս կողմից, արտադրողներին չտար ըհանգստի ռեժիմի՝ հնարավորություն, այլ ստեղծեր պայմաններ ինքնարժեքի իջեցման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար:

Կից աղյուսակներում ներկայացված՝ 2018-2020թթ. ցեմենտի ներքին շուկայի շրջանառության վիճակագրական տվյալների միջակայքերն («հունվար-հունիս» և «հուլիս-դեկտեմբեր») ըտնրվել են այն նպատակով, որպեսզի տարանջատվի «Պետական տուրքի մասին օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-59) ընդունումն ու ընդունելուց հետո ընկած ժամանակահատվածը:

Այսպես, Հայաստանում ցեմենտի սպառման ծավալները 2018 թվականին կազմել են 727.3 հազար տոննա, որից 546.3 հազար տոննան արտադրվել է Հայաստանում, իսկ 181.0 հազար տոննան ներմուծվել է:

2019 թվականին Հայաստանում արտադրվել է 582.1 հազ.տ. ցեմենտ, ընդ որում՝ հունվար-հունիս ամիսներին՝ 238.5 հազ. տ., իսկ հուլիս-դեկտեմբեր ամիսներին՝ 343.6 հազ.տ., իսկ 2020թ. հունվար-հունիս ամիսներին 343,6տ. (Աղյուսակ 1):

Օրենքի կիրարկման արդյունքում ցեմենտի արտադրությունը 2019թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին աճել է 11.2%-ով (Աղյուսակ 1, 2), իսկ 2020-ին՝ 21%-ով (Աղյուսակ 4):

Աղյուսակ 1

Տեղեկանք

2018-2020թթ. Հայաստանում արտադրված (ներառյալ՝ ներմուծված կլինկերից) ցեմենտի ծավալների մասին

Ժամանակա շրջան	Արտադրություն /հազ.տ/								
	հունվար-հունիս			հուլիս-դեկտեմբեր			հունվար-դեկտեմբեր		
	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020
Ընդամենը՝	237.2	238.5	308.6	309.1	343.6	406.3	546.3	582.1	714.9

Տեղեկանք
2018-2020թթ. Հայաստանում արտադրված (բացառությամբ՝ ներմուծված կլինկերից) ցեմենտ ծավալների մասին

<i>Ընկերու- թյուն</i>	<i>Արտադրություն /հազ.տ/</i>								
	<i>հունվար-հունիս</i>			<i>հուլիս-դեկտեմբեր</i>			<i>հունվար-դեկտեմբեր</i>		
	2018	2019	2020	2018	2019	2020	2018	2019	2020
Արարատ-ցեմենտ	173.2	184.0	226.6	232.8	259	307.4	406	443.0	534.0
Հրազդան-ցեմենտ	44.7	10.7	38.0	48.8	18.9	51.4	93.5	29.6	89.4
<i>Ընդամենը՝</i>	<i>217.9</i>	<i>194.7</i>	<i>264.6</i>	<i>201.7</i>	<i>190.1</i>	<i>358.8</i>	<i>499.5</i>	<i>472.6</i>	<i>623.9</i>

Չնայած, որ 2019 թվականին Արարատ-ցեմենտը գրանցել է արտադրության ծավալների աճ 9.1%-ի չափով, այնուամենայնիվ՝ ցեմենտի արտադրությունը 2018 թվականի նկատմամբ Հայաստանում նվազել է 5.4%-ով (Աղյուսակ 2), ինչը բացատրվում է Հրազդան-ցեմենտ գործարանի ֆինանսական ծանր վիճակով, որի հետևանքով ընկերությունը որոշ ժամանակով դադարեցրել էր արտադրական գործունեությունը: Իսկ 2020 թվականին ցեմենտի արտադրության աճը (բացառությամբ՝ ներմուծված կլինկերից) կազմել է 32%:

Աղյուսակ 3-ում ներկայացված են 2018-2019թթ. Հայաստան ներմուծված ցեմենտի և կլինկերի ծավալները:

Տեղեկանք
2018-2019թթ. Հայաստան ներմուծված ցեմենտի և կլինկերի ծավալների մասին

Անվանում	Ներմուծում /հազ.տ./								
	հունվար-հունիս		Աճի տեմպը %	հուլիս-դեկտեմբեր		Աճի տեմպը %	հունվար-դեկտեմբեր		Աճի տեմպը %
	2019թ	2018թ		2019թ	2018թ		2019թ	2018թ	
Ցեմենտ	105.7	23.4	386.2	100.8	115.0	105.8	208.7	138.3	150.9
Կլինկեր	37.8	15.6	242.9	52.1	14.8	352.0	101.0	30.4	332.2
Ընդամենը՝	143.5	39.0	367.9	152.9	125.7	121.6	296.5	168.7	175.8

Աղյուսակ 3-ում ներկայացված ցուցանիշները փաստում են, որ 2019թ. հունվար-հունիս ամիսներին (մինչև օրենքի ընդունումը) կտրուկ աճել է ինչպես ցեմենտի, այնպես էլ կլինկերի ներմուծումը, արձանագրելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համապատասխանաբար 386.2% և 242.9% աճի տեմպ:

Օրենքի ընդունման և պետական տուրքի կիրառման արդյունքում ցեմենտի ներմուծման տեմպը նվազել է 2019թ. հուլիս-դեկտեմբեր ժամանակահատվածում (տուրքի սահմանումը ուժի մեջ է մտել 29.06.2019թ.), 2020-ին՝ նվազել է 22.1%-ով (Աղյուսակ 5):

2020 թվականին (2019-ի նկատմամբ) (չնայած ԿՈՎԻԴ-19 կորոնավիրուսային համավարակով պայմանավորված բացասական հանգամանքները) աճել է ցեմենտի տեղական արտադրությունը 32%-ով, իսկ ներմուծված կլինկերից ցեմենտի արտադրությունը նվազել է 18.2%-ով (Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տեղեկանք

2020թ. Հայաստանում արտադրված ցեմենտի ծավալների մասին

Հայաստանում արտադրված ցեմենտ	2020թ. (հազ. տ)	2019թ. (հազ. տ)	Աճի տեմպը %

Ցեմենտ (բացառությամբ՝ ներմուծված կլինկերից)	623.9	472.6	132.0
Ցեմենտ՝ ներմուծված կլինկերից	91.0	117.9	77.2
<i>Ընդամենը՝</i>	714.9	590.5	121.1

Հարկ է նշել, որ 2020 թվականին ցեմենտի և կլինկերի ներմուծումը նույնպես դրսևորվել է նվազման միտում և նվազումը կազմել է համապատասխանաբար 28.1% և 22.1%: (Աղյուսակ 5): Միևնույն ժամանակ պետք է նշենք, որ կլինկերից ցեմետ ստանալու տեխնոլոգիան նույնպես նախատեսում է արտադրական գործընթացի իրականացում:

Աղյուսակ 5

Տեղեկանք

2019-2020թթ. Հայաստան ներմուծված ցեմենտի և կլինկերի ծավալների մասին

<i>Այրանքատեսակ</i>	<i>2020թ.</i>	<i>2019թ.</i>	<i>Աճի տեմպը %</i>
Ցեմենտ /հազ. տ/	150.0	208.7	71.9
Կլինկեր /հազ.տ./	78.7	101.0	77.9

Համաձայն ուսումնասիրությունների՝ ձեռնարկված միջոցները դրական ազդեցություն են ունեցել Իրանից ցեմենտի ներմուծումը որոշակիորեն զսպելու և տեղական արտադրությունը խթանելու համար:

Իրանն ընդգրկված է աշխարհի 10 խոշորագույն ցեմենտ արտադրողների ցանկում: Այնտեղ առկա է ցեմենտի արտադրության հզոր ոլորտ, որտեղ գործում են ցեմենտի 70 գործարաններ: Այդ գործարաններում տեղադրված են կլինկերի թրծման առաջադեմ տեխնոլոգիաներով 93 վառարաններ, որոնց գրեթե կեսը ունեն շահագործման 10 տարուց պակաս տարիք: Վերջին 10 տարիներին Իրանում ցեմենտի արտադրությունը 32 մլն տոննայից աճել է մինչև 83 մլն տոննայի՝ արձանագրելով տարեկան շուրջ 150%-ի աճի տեմպ: Իրանական ցեմենտի ավելի քան 30 մլն տոննան արտահանվում է: Ըստ կանխատեսումների՝ 2025թ. Իրանում կարտադրվի 120 մլն տ. ցեմենտ:

Իրանից ներմուծվող ցեմենտի և կլինկերի ցածր գները հիմնականում պայմանավորված են հետևյալ հանգամանքներով՝

- Իրանում ցեմենտի արտադրության համար անհրաժեշտ՝ գազի և էլեկտրաէներգիայի ցածր սակագներ, ինչպես նաև ցեմենտի արտադրության համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներն արտադրվում են տեղում և մատչելի են,
- բարձրորակ և էժան հումքի առկայություն,
- պետության կողմից ցեմենտի ներքին արտադրողներին տրանսպորտային ծախսերի սուբսիդավորում:

Այդ իսկ պատճառով Հայաստան ներմուծվող իրանական ցեմենտը (միջև պետական տուրքի սահմանումը) մրցակցային լուրջ խնդիրներ էր առաջ բերում տեղական արտադրողների համար՝ ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ:

Հիմք ընդունելով վերը նշված ուսումնասիրությունները՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նպատակահարմար է գտնում ցեմենտի ներմուծման սահմանափակումների կիրառման շարունակականության ապահովումը այս փուլում, իսկ հետագայում այն կարող է վերանայվել կախված շուկայում ստեղծված իրավիճակից:

Ցեմենտ արտադրող տեղական ընկերություններում 2018 թվականի իրականացրած արտադրական գործունեության արդյունքում արտադրանքի ձևավորված միջին ինքնարժեքը կազմել է 42-43 հազ. դրամ (առանց ԱԱՀ):

Ըստ մեր կողմից իրականացված հաշվարկների՝ Իրանից ներկրվող 1տ. ցեմենտի և 1տ. կլինկերի ինքնարժեքը հետևյալն է.

Կլինկերի արժեքը սահմանին 9000 դր/տոննա, ճանապարհածախսը՝ ներառյալ վարորդ, և բոլոր այլ ծախսերը մինչև գործարան՝ 16000 դր/տոննա: Արդյունքում մեկ տոննա կլինկերը գործարան հասնում է 25000 դր/տոննա՝ ներառյալ ԱԱՀ, կամ մոտ 21000 դրամ/տոննա՝ առանց ԱԱՀ: Մեկ տոննա ցեմենտի մեջ օգտագործվում է 0,8 տոննա կլինկեր, և արդյունքում ստանում ենք 20000 դրամ/տոննա կլինկերից ստացված ցեմենտի ինքնարժեք: Պետք է գումարել մոտ 2500 դրամ/տոննա արտադրական, ադմինիստրատիվ և մաշվածության ծախսերը, որից էլ ստացվում է՝ 22500 դրամ/տոննա ինքնարժեք անցած տարվա ծավալների վրա: Ընկերությունը ցեմենտը վաճառում է 38000 դրամ/տոննա ներառյալ ԱԱՀ, կամ 31600 դրամ/տոննա, առանց ԱԱՀ: Նորմալ շահույթը նման պարզ արտադրության համար չպետք է գերազանցի 5%, որից էլ բխում է, որ մենք կարող ենք դնել այնպիսի տուրք, որ մեկ տոննա ցեմենտի ինքնարժեքը բարձրանա մինչև 29925 դրամ/տոննա, այսինքն մոտ 9281 դրամ տուրք

մեկ տոննա կլինկերի վրա: Հետևում է, որ մենք պետք է կիրառենք այս տուրքը, գուցե 9000 դրամ, որը կհավասարեցնի դիրքերը տեղական ցեմենտ արտադրող ընկերությունների հետ:

Կլինկերից ցեմենտ արտադրող ընկերություններն անցած տարի վճարել է մոտ 500 մլն դրամ հարկ, սակայն տուրքի չկիրառման պարագայում գտնվել են ավելի լավ պայմաններում:

Ներմուծվող ցեմենտի սահմանված պետական տուրքը (14 հազ.դր) ամբողջությամբ չէր հավասարեցնում մրցակցային դաշտը: Ինչ վերաբերում է Իրանից ներկրվող ցեմենտին, ապա այն ակնհայտորեն նույնպես գտնվում է գնային լավ մրցակցային պայմաններում, քանի որ Իրանում դրա արտադրությունը սուբսիդավորվում է, հետևաբար հավասար պայմաններ ապահովելու համար պետք է կիրառել ավելի բարձր տուրք, մոտ 25000 դրամ/տոննայի համար:

Այս դեպքում, մենք կունենանք հետևյալ պատկերը՝

Ցեմենտի գինը կմնա նույնը՝ 38-45հզ դրամ:

Հարկերը կավելանան մոտ 1,5 մլրդ դրամով, որից մոտ 700 մլն.դր. տուրքի տեսքով, մնացածը՝ տեղական արտադրողների ծավալների աճի տեսքով:

Կպահպանվեն աշխատատեղերը և արտադրական շղթաները:

Կարծում եմ, որ նման դասավորության դեպքում մենք կունենանք հետևյալ տրանսֆորմացիան՝

1 մլն տոննա շուկայից՝

200 հազական տոննա ցեմենտ կիսանի Շինցեմենտին և Հրազդան ցեմենտին, իսկ 600 հազ. տոննա՝ Արարատցեմենտին:

2020 թվականի պատկերը հետևյալն է՝

500հազ. տոննա Արարատցեմենտինն է, 200 հազ. տոննա՝ պարսկական ներմուծվածինը, 100 հազ. տոննա՝ Շինցեմենտինը, 100 հազ. տոննա՝ Հրազդանցեմենտինը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ մրցակցային գներ կարող են ապահովել ներմուծվող ցեմենտի համար տուրքի 25 հազ. դրամը, իսկ կլինկերի համար՝ 9 հազ. դրամը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 95-Ն որոշմամբ ցեմենտի ներմուծման արգելքի ժամկետն ավարտվում է ս.թ. ապրիլի 8-ն և նպատակ ունենալով ներդաշնակեցնել ցեմենտի սահմանափակումների իրավական կարգավորումները «Եվրասիական տնտեսական միության մասին» Պայմանագրի պահանջներին՝ առաջարկվում է հիմք ընդունել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանված դրույթը, (*«արտաքին առևտրի ոլորտում*

սահմանափակման ենթակա ապրանքները՝ ապրանքներն են, որոնց նկատմամբ արտաքին առևտրի դեպքում կարող են կիրառվել սահմանափակումներ և (կամ) արգելքներ մի շարք նպատակներով, այդ թվում՝ ներքին շուկայի ու տեղական արտադրության պաշտպանության նպատակով...», ինչպես նաև 2.1-հոդվածը՝ ներքին շուկայի ու տեղական արտադրության պաշտպանության նպատակով ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ 2523210000 ապրանքային դիրքին դասվող ծածկագրի) ապրանքային դիրքի ծածկագրին դասվող ապրանքները համարել արտաքին առևտրի ոլորտում սահմանափակման ենթակա ապրանքներ և այդ ապրանքների «Բացթողնում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացնել լիցենզիաների հիման վրա, և գանձել տուրք լիցենզիաների տրամադրման համար:

Առաջարկվող նախագիծը չի հակասում Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին, քանի որ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 47-րդ հոդվածի համաձայն՝ ԵԱՏՄ անդամ պետությունները երրորդ երկրների հետ առևտրում կարող են միակողմանիորեն սահմանել և կիրառել ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

ԵԱՏՄ ներքին շուկան պաշտպանելու նպատակով վերը նշված ոչ սակագնային կարգավորման միջոցները պարբերաբար կիրառվում են ԵԱՏՄ անդամ պետություններում՝ տարբեր ապրանքների ներմուծման կամ արտահանման նկատմամբ: Օրինակ՝ Բելառուսի Նախարարների Խորհրդի 09.07.2019թ. N 459 որոշմամբ սահմանափակվել է երրորդ երկրներից Բելառուսի Հանրապետություն պորտլանդ-ցեմանտի ներմուծումը, իսկ Ղազախստանը ժամանակավորապես արգելել է երրորդ երկրներից ցեմենտի և կլինկերի ներմուծումը:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունելու կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա, իսկ պետական բյուջեում նախատեսում է եկամուտների ավելացում:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումից հետո անհրաժեշտություն կառաջանա մշակել և հաստատել «Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով կսահմանվի ցեմենտի ներմուծման լիցենզիաների

տրամադրման պայմանները (ՀՀ Ազգային ժողովի կողմից սույն օրենքի ընդունման արդյունքում` ՀՀ կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ):

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը դրվել է քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft), որի վերաբերյալ տեղեկանքը կցվում է:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Ներքին շուկայի ու տեղական արտադրության պաշտպանություն: Տեղական մշակող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի բնականոն գործունեության ապահովում և արտադրանքի մրցունակության բարձրացում:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Տեղական արտադրության զարգացում, ներմուծման փոխարինում:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագիծը մշակվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից` հաշվի առնելով հանրապետության բիզնես-շրջանակների առաջարկությունները և շահագրգիռ պետական մարմինների դիրքորոշումները:

5. Ակնկալվող արդյունքը

Սույն նախագծի ընդունումը հնարավորություն կտա շուկայավարման մեխանիզմներով ապահովել հավասար պայմաններ ցեմենտի արտադրությամբ և ներմուծմամբ զբաղվող տնտեսվարողների միջև:

6. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)